«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Զեռներեցական կրթության նպատակը դպրոցում:
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Ռուզաննա Պողոսյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N 12 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2

Ձեռներեցական կրթության նպատակը դպրոցում……4

Տեխնոլոգիայի ուսուցման գործընթացում ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը……8

Ձեռնարկատիրության էությունը, գործառույթները և սկզբունքները……11

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի բովանդակությունը ……13

Եզրակացություն……15

Օգտագործված գրականություն……16

Հավելված……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքում հաջողությունների հասնելու համար,այն բոլոր ունակությունները, որոնք մարդուն օգնում են, սկզբնավորվում են կրթության դեռևս վաղ տարիներին: Այդ իսկ պատճառով կրթության տարբեր մակարդակներում՝ սկսած տարրական դպրոցից մինչև ավագ դպրոց, սովորողների մեջ պետք է դաստիարակել այնպիսի որակներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, ինքնավստահությունը, պատասխանատվության զգացումը ստեղծագործելու կարողությունը, և այլն: (1)Անձի մոտ գլխավոր ունակություններից է ձեռներեցությունը, որն անհրաժեշտ է ինքնադրսևորման, սոցիալական ներգրավվածության, ակտիվ քաղաքացիության և աշխատունակության մեծացման համար: Ժամանակի հետ առավել կարևոր է դառնում հանրակրթական ոլորտում ձեռներեցական կրթության ներդրման ապահումը:

Ամբողջ աշխարհում տնտեսական աճի տեմպերի նվազման և գործազրկության մակարդակի բարձրացման պայմաններում տնտեսական աճի ապահովումը և նոր աշխատատեղերի ստեղծումը դարձել են առաջնահերթ խնդիրներ: Այս խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը ձեռներեցության խթանումն է, որը կնպաստի ոչ միայն տնտեսական աճի ապահովմանը, այլև նոր աշխատատեղերի ստեղծմանը, հետևաբար՝ գործազրկության մակարդակի հետագա նվազեցմանը:

Հետազոտության արդիականությունը.

Ձեռներեցության զարգացումը կարող է մեծապես խթանել նաև երկրում սոցիալական հավասարության հաստատմանը, նորարարության զարգացմանը և, վերջին հաշվով, քաղաքացիների բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

Ձեռներեցական կրթությունը հենց այն գործիքն է, որը կնպաստի սովորողների շրջանում աշխատանքային հիմնական հմտությունների ձևավորմանը:

Հետազոտության հիմնական նպատակներն են.

- Զարգացնել գործարարության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ սովորողների մոտ;
- Ձևավորել որոշակի համոզմունքներ, վստահություն, արժեքներ և վերաբերմունք սովորողների մոտ;
- Ձևավորել աշխատանքային պատրաստվածություն ունեցող անձի ;

Հետազոտության հիմնական խնդիրները.

Հաճախ գործատուն դժգոհում է, որ դպրոցն ավարտած շատ շրջանավարտներ, որոնք ընդունվում են վարձու աշխատանքի, չեն տիրապետում աշխատանքային այնպիսի հիմնական հմտություններին, ինչպիսիք են, օրինակ, աշխատանքի ընթացքում որևէ խնդիր լուծելը, ժամանակը ճիշտ կառավարելը, թիմային աշխատանքներում ներգրավվելը, գրավոր և բանավոր ճիշտ հաղորդակցվելը, զգացմունքները կառավարելը և այլն:

1.https://www.e-draft.am/en/projects/258/about

Ձեռներեցական կրթության նպատակը դպրոցում:

Ձեռներեցությունը անհատի՝ գաղափարները գործողությունների վերածելու ընդունակությունն է: Այն ներառում է ստեղծագործելու կարողությունը, նորարարությունը, ռիսկի դիմելու ընդունակությունը, ինչպես նաև նպատակին հասնելու ծրագրեր նախագծելու և դրանք կառավարելու հմտությունը:

Տնտեսական աճի ապահովումը և նոր աշխատատեղերի ստեղծումը մեր երկրում դարձել են առաջնահերթ խնդիրներ: Այս խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը ձեռներեցության խթանումն է: Ձեռներեցության զարգացումը նպաստում է ոչ միայն տնտեսական աճի ապահովմանը, այլ նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը, հետևաբար՝ գործազրկության մակարդակի հետագա նվազեցմանը: Ձեռներեցության զարգացումը կարող է մեծապես խթանել նաև երկրում սոցիալական հավասարության հաստատմանը, նորարարության զարգացմանը և, մեծ հաշվով, քաղաքացիների բարեկեցիկ կյանքի ապահովմանը: Այսպիսի պայմաններում առավել կարևոր և արդիական է դառնում հանրակրթական ոլորտի տարբեր մակարդակներում ձեռներեցական կրթության ներդրման ապահումը:

Անձի ձեռնարկատիրական ընդունակությունները ներառում են նախաձեռնողականությունը, ստեղծագործելու կարողությունը, նորարարությունը, ռիսկի դիմելու ընդունակությունը, ինչպես նաև նպատակին հասնելու, ծրագրեր նախագծելու և դրանք կառավարելու հմտությունը: Ձեռներեցի հիմնական նպատակը և գործ հիմնելու շարժառիթը շահույթ վաստակելու հեռանկարն է: Այստեղ ևս մեկ անգամ շեշտադրվում է, որ հենց շահույթ վաստակելու հեռանկարն է ձեռներեցին մղում հիմնելու իր սեփական գործը: Ձեռներեցը «բարիքի ստեղծող է, որի նպատակն է այն վաճառել»: Նա ապրանք է արտադրում կամ ծառայություն է մատուցում՝ շահույթ ստանալու նպատակով»: Ուսուցիչը աշակերտների հետ քննարկում է, թե ինչու է փողն անհրաժեշտ ձեռներեցին: Ձեռներեցական կրթության նպատակն է աշակերտներին սովորեցնել ձեռներեցությունը

ընդունել և դիտարկել որպես վարձու աշխատանքի գրավիչ և օրինական այլընտրանք, ինչպես նաև գործազրկության հաղթահարման տարբերակ:

Ձեռնարկատիրական կրթությունը սովորողներին պետք է ապահովի հետևյալ հիմնական կոմպետենցիաներով.

- տեսական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նոր կազմակերպություն կամ ստարտափ հիմնելու և այն գործարկելու համար,
- իրավիճակները քննարկելու, դրանք հասկանալու, ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու կարողություն,
- նախաձեռնողականություն և հնարավորությունները բացահայտելու և գնահատելու կարողություն,
- մտքեր, մտահղացումներ, բիզնես գաղափարներ ստեղծելու և դրանք ներկայացնելու կարողություն,
- նորարարությունները հասկանալու և գնահատելու, ինչպես նաև նորարարություններ մտածելու կարողություն,
- բիզնես պլան, ինչպես նաև ցանկացած գործողությունների պլան կազմելու կարողություն,
- տեխնիկական և տեխնոլոգիական նորամուծությունները գնահատելու և դրանք կիրառելու կարողություն,
- անձնական հետաքրքրությունները և նախասիրությունները բացահայտելու կարողություն,
- շուկայական հետազոտություններ կատարելու կարողություն,
- փող վաստակելու հնարավորությունները հասկանալու կարողություն,
- վաստակած շահույթը ճիշտ օգտագործելու կարողություն,

- ժամանակը ճիշտ կառավարելու և իրատեսական պլաններ կազմելու կարողություն,
- գրավոր և բանավոր արդյունավետ հաղորդակցվելու, ժողովներ և հանդիպումներ կազմակերպելու կարողություն,
- ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու կարողություն,
- կառավարչական հմտություններ զարգացնելու կարողություն:

Ձեռնարկատիրական կրթության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- պատկերացնել, թե ողջ նախագծի իրականացումը ինչպիսի առաջադրանքների կատարում է պահանջում,
- որոշել այդ առաջադրանքների կատարման իրական ժամկետները և պատասխանատուներին, հասկանալ ռիսկային գործոնները և ակնկալվող արդյունքները,
- վերլուծել ստացված տեղեկատվությունը և ըստ անհրաժեշտության կիրառել այն,
- պատկերացնել՝ ինչպես են ստեղծվում ստարտափները՝ սկսնակ կազմակերպությունները, կամ այլ տեսակի կազմակերպությունները և կրթական ծրագրի շրջանակներում ստեղծել սեփական կազմակերպությունը:
- բացահայտել և հասկանալ հաջողակ ձեռներեցների և ներդրողների գործունեությունը, ինչպես նաև պատկերացնել, թե ինչպես են նրանք արժեք ստեղծում իրենց և այլոց համար,
- թվարկել բիզնես և աշխատանքային էթիկայի հիմնական նորմերը և բացատրել դրանց պահպանման անհրաժեշտությունը հաջողված ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար,

- էթիկայի հիմնական նորմերը կիրառել իր շրջապատում,
- նկարագրել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և այդ սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ:

Աշակերտը պետք է հստակ հասկանա թե ինչ է բարիքը, ապրանքը, ծառայությունը: Բայց մենք պետք է բազմաթիվ օրինակներով քայլ առ քայլ երեխային մատուցենք իրենց հասկանալի ձևով խաղերով, բեմադրությամբ և այլն: Իմ համոզմամբ սա ճիշտ արվող քայլ է, որպեսզի կյանքից ետ չմնանք և քայլենք աշխարհին համընթաց: Իմ նպատակը դասի ժամանակ ձեռներեցին ներկայացնելն է: Եվ՛ ապրանքը, և՛ բարիքը, և՛ փողը կախված են ձեռներեցից: Նա է առաջին դեմքը և կախված այն բանից , թե ով է նա, ինչպիսին է նրա մարդկային հատկանիշները, ինչ գիտելիքի պաշար ունի և փորձառություն, այդպիսին էլ կլինի նրա ստեղծած բիզնեսը: Բերեք թվարկենք այն հատկանիշները, որ պետք է ունենա ձեռներեցը: Նախ պետք է իմանանք, որ նրանք չեն ծնվում, այլ դառնում են: Նա պետք է լինի նպատակասլաց, պատասխանատու, գործն ավարտին հասցնող մարդ: Նա պետք է լինի կազմակերպիչ: Նախքան գործը սկսելը կազմի գործողությունների պլան և նախապես ծրագրի բոլոր քայլերը: Կարողանա ճիշտ որոշում կայացնի և հավատարիմ մնա իր ընդունած որոշումներին: ՈՒնենա ճկուն մտածելակերպ և ռիսկի դիմելու պատրաստակամություն: Լինի խելացի, աշխատասեր, հնարամիտ , բարեկիրթ և ազնիվ:

Տեխնոլոգիայի ուսուցման գործընթացում ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը:

Ձեռնարկատիրությունը, նոր բիզնեսի ձևավորման, թողարկման և գործարկման գործընթաց է, որը հաճախ ներկայացնում է փոքր բիզնեսի մեկնարկը: Մարդիկ, ովքեր ստեղծում են այս բիզնեսը կոչվում են ձեռներեցներ կամ գործարար: Ձեռներեցության ուսուցումը մեծացնում է նոր ձեռնարկների և ինքնազբաղվածության հնարավորությունները, ինչպես նաև բարձրացնում է անհատի տնտեսական շահագրգռվածությունը և բավարարվածությունը: Ձեռներեցության ուսուցման օգուտները չեն սահմանափակվում միայն նորարարական ձեռնարկների և նոր աշխատատեղերի ստեղծմամբ, հասարակությունը մեծապես կշահի ձեռներեցական մտածելակերպով և հմտություններով օժտված երիտասարդների գործունեությունից:

Ձեռներեցական կրթության նպատակն է աշակերտներին սովորեցնել ձեռներեցությունը ընդունել և դիտարկել որպես վարձու աշխատանքի գրավիչ և օրինական այլընտրանք, ինչպես նաև գործազրկության հաղթահարման տարբերակ:

Ձեռներեցական կրթությունը սովորողներին ապահովում է հետևյալ հիմնական կոմպետենցիաներով՝

- տեսական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նոր ձեռնարկություն կամ ստարտափ հիմնելու և այն գործարկելու համար,
- իրավիճակները քննարկելու, դրանք հասկանալու, ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու կարողություն,
- հնարավորությունները բացահայտելու և գնահատելու կարողություն,
- մտքեր, մտահղացումներ, բիզնես գաղափարներ ստեղծելու և դրանք ներկայացնելու կարողություն,
- նորարարությունները հասկանալու և գնահատելու, ինչպես նաև նորարարություններ մտածելու կարողություն,
- բիզնես պլան, ինչպես նաև ցանկացած գործողությունների պլան կազմելու կարողություն,
- տեխնիկական և տեխնոլոգիական նորամուծությունները գնահատելու և դրանք կիրառելու կարողություն,
- անձնական հետաքրքրությունները և նախասիրությունները բացահայտելու կարողություն,
- շուկայական հետազոտություններ կատարելու կարողություն,
- ժամանակը ճիշտ կառավարելու և իրատեսական պլաններ կազմելու կարողություն,
- արդյունավետորեն գրավոր և բանավոր հաղորդակցվելու, ժողովներ և հանդիպումներ կազմակերպելու կարողություն,
- ստեղծագործաբար և քննադատաբար մտածելու կարողություն,
- կառավարչական հմտություններ զարգացնելու կարողություն,

- կարողանալ պատկերացնել, թե ողջ նախագծի իրականացումը ինչպիսի առաջադրանքների կատարում է պահանջում, կարողանալ որոշել այդ առաջադրանքների կատարման իրական ժամկետները և պատասխանատուներին, հասկանալ ռիսկային գործոնները և ակնկալվող արդյունքները,
- կարողանալ վերլուծել ստացված տեղեկատվությունը և ըստ անհրաժեշտության կիրառել այն,
- կարողանալ պատկերացնել՝ ինչպես են ստեղծվում ստարտափները կամ այլ տեսակի ձեռնարկությունները և կրթական ծրագրի շրջանակներում ստեղծի իր ձեռնարկությունը:
- կարողանալ բացահայտել և հասկանալ հաջողակ ձեռներեցների և ներդրողների գործունեությունը, ինչպես նաև պատկերացնել, թե ինչպես են նրանք արժեք ստեղծում իրենց և այլոց համար,
- կարողանալ բացատրել՝ ինչ է նշանակում կազմել գործարարության ռազմավարություն,
- կարողանալ նկարագրել բիզնես էթիկայի անհրաժեշտությունը հաջողված ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար և այդ էթիկական նորմերը կիրառել իր բիզնես գործունեության մեջ,
- կարողանալ նկարագրել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և այդ սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ:

Ձեռնարկատիրության էությունը, գործառույթները և սկզբունքները

Ձեռնարկատիրության էությունը, որպես տնտեսական կատեգորիա, որոշվում է իր բնույթով և առանձնահատկություններով `որպես տնտեսական հատուկ վարքի տեսակ, տնտեսվարող սուբյեկտների՝ հնարավոր շահույթի աղբյուրին արձագանքելու ունակություն:

Ձեռնարկատիրությունը ձեռնարկատիրական, նախաձեռնողական, ռիսկի վրա հիմնված գործունեություն է, որն ուղղված է ռեսուրսների լավագույն օգտագործումը գտնելու համար ` եկամտի ստեղծման և գույքի ավելացման նպատակով: Ձեռնարկատիրությունը ձեռներեց լինելու կամ «ձեռնարկատիրական ձեռնարկության սեփականատիրոջ կամ մենեջեր լինելու գործողություն է, որը ռիսկի և նախաձեռնության միջոցով փորձում է շահույթ բերել»

Ձեռնարկատիրությունն իր տնտեսական բնույթով անքակտելիորեն կապված է շուկայական տնտեսության հետ և հանդիսանում է դրա արտադրանքը: Որպես տնտեսական գործունեության սեփականություն, այն դրսևորվում է փոխանակման գործընթացում լրացուցիչ օգուտներ քաղելու ցանկությամբ: Մինչդեռ փոխանակումն ինքնին դեռ ձեռներեցության աղբյուր չէ: Այն դառնում է այդպիսին, երբ այն վերածվում է մեկ տնտեսական շրջանառության բաղկացուցիչ օղակի, իսկ արտադրությունը փոխանակման համար դառնում է տնտեսվարող սուբյեկտների որոշիչ գործառույթը: Ապրանքների արտադրությունը պատմականորեն և գենետիկորեն ձեռներեցության մեկնարկային կետն է: Փոխանակումը, առաջին հերթին, խթանում է նոր հնարավորությունների որոնումը, այսինքն. Նախաձեռնություն: Երկրորդ, փոխանակման գործընթացում է, որ ձեռնարկատերը տեսնում է հնարավոր օգուտի աղբյուրը, ինչը և՛ շարժառիթ է, և՛ գնահատում է իր նախաձեռնության հաջողությունը: Երրորդ ` ձեռնարկատերը, երբ բախվում է իրեն նման անձանց հետ փոխանակման գործընթացում, իր գործունեությունը ընկալում է որպես մրցակցային: Չորրորդ ` որպես սոցիալական կարիքների բավարարման մեխանիզմ, փոխանակումը որոշում է ձեռնարկատիրական գործունեության սոցիալական բնույթը: Ռուսաստանում ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ է հատուկ ծրագիր, որը պետք է ներառի.

- ✓ կայուն տնտեսական օրենսդրության ստեղծում;
- ✓ ձեռներեցներին օգնելու համար պետություն-հանրային ներդրումների,
- ✓ ապահովագրության և տեղեկատվության ֆոնդերի ձևավորում;
- ✓ տարածաշրջանային շուկայի ենթակառուցվածքի կառուցում (ուսուցում, խորհրդատվություն, սերտիֆիկացման կենտրոններ);
- ✓ համապատասխան հարկային, արժույթի գնի և հակամենաշնորհային կարգավորման ներդրում, ինչը գործընկերներին խաբելը անշահավետ կդարձնի:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկատիրական կրթության գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և վարքագծի այն տարրերը, որոնք ինտեգրված ձևով ներառվելու են «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակության մեջ, առարկայական ծրագրերի կառուցվածքային էական փոփոխություններ չեն պահանջում: Տեխնոլոգիայի առարկայական ծրագրերում ոչ թե առանձին թեմաներ և դասաժամեր են հատկացվելու ձեռներեցական գիտելիքների համար, այլ տեխնոլոգիայի նյութի ուսուցմանը զուգընթաց սահմանվելու է նաև ձեռներեցական կարողությունների ձևավորման նպատակ: Իսկ վերջինիս իրականացման համար ծրագրվում է դիտարկել գործարար ոլորտի այնպիսի իրավիճակներ, օրինակներ, առաջադրանքներ, խաղեր, որոնց իրականացումը և կատարումը անմիջական առնչություն ունեն ուսուցանվող նյութի բովանդակության և կիրառության հետ: Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրումը նպաստում է սովորողի այնպիսի որակների ձևավորմանը, որոնց շնորհիվ նա կկարողանա իր գիտելիքներն ու հմտությունները կիրառել հետևյալ ուղղություններով.

1. Բիզնես գաղափար և բիզնես պլան
2. Շուկայի հետազոտություն և վերլուծություն
3. Ինչպես ստեղծել ձեռնարկություն. բիզնեսը որպես իրավական միավոր
4. Բիզնես էթիկա
5. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն:

Տեխնոլոգիայի ուսուցման գործընթացում ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը

- չպետք է ավելորդ ծանրաբեռնվածություն առաջացնի սովորողների համար,
- դասավանդման տեսանկյունից պետք է լինի հետաքրքիր և դյուրըմբռնելի,

- ձեռներեցության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է մատուցվի փոքր չափաբաժիններով, ներկայացվի պարզ, մատչելի և գրավիչ ձևերով՝ խուսափելով տվյալ տարիքի երեխայի կյանքին չառնչվող տեղեկատվություն հաղորդելու գայթակղությունից,
- պետք է կրի ինտերակտիվ բնույթ՝ հենվելով աշակերտակենտրոն ուսուցման առավելությունների վրա,
- ինտեգրվող և հիմնական նյութը պետք է փոխլրացնեն միմյանց՝ կազմելով ամբողջական միավոր, առանց ձախողելու դասի նպատակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շուկայական հարաբերությունները շատ բարդ մարտահրավերներ են ներկայացնում մեր հասարակության համար, որոնց շարքում կարևոր տեղ է գրավում ձեռներեցությունը:

«Ձեռներեց և ձեռներեցություն» թեման դպրոցի տեխնոլոգիայի դասընթացի նոր թեմաներից է: Այս թեմայի հիմնական նպատակն այն է, որ սովորողը պատկերացնի թե ով է ձեռներեցը, որն է ձեռներեցության դերը, ինչ հատկանիշներով է բնութագրվում ձեռներեցը: Աշակերտը պետք է իմանա ինչ է բարիքը, որքան է կարևոր ապրելու համար բարիք ստեղծելը: Պետք է սովորողին բացատրել ինչ է փողը, որն է նրա դերը կյանքում, ինչպես պետք է վաստակել փողը:

Հրազդանի N12 հիմնական դպրոցում, <<Տեխնոլոգիա>> առարկայի շրջանակներում կազմակերպել էինք ցուցահանդես-վաճառք: Ցուցահանդեսի ընթացքում ներկայացվել էին 5-7-րդ դասարանի աղջիկների ձեռագործ իրերն ու ստեղծագործությունները՝ էկոպայուսակներ, դրամապանակներ, ասեղնագործ սրբիչներ և այլն: Մասնակցում էին ուսուցիչներ, ծնողներ և հյուրեր: Իսկ վաճառքից ստացված հասույթով գնվեց կարի մեքենա: Այդ նախաձեռնությամբ փորձել եմ աշակերտներին սովորեցնել ինչպես փող աշխատել, ինչպես նաև ներկայացնել դասարանի աղջիկների հմտությունները:

«Շատ կարևոր է, որ երեխաները գոնե մեկ անգամ գնան տեսնեն որևէ սոցիալական ձեռնարկատիրություն, որպեսզի ավելի լավ պատկերացնեն այն՝ իր նպատակներով, առաքելությամբ: Կարծում եմ, դա երեխաների մոտ կօգնի ձևավորել նոր արժեհամակարգ»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.«Ձեռնարկատիրական կրթության» ձեռնարկ, Երևան, 2017թ

2.Տեխնոլոգիա առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012

3.Կ. Պապիկյան., Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա, Երևան, հեղ. Հրատ, 2013թ.,

4. Ալեքսանդրովա Կ. Ձեռնարկատիրություն: - SPb.: Neva, 2004.

5.https://fliphtml5.com/fumf/wnyg

ՀԱՎԵԼՎԱԾ